

օրէ՛ զառ ՚ի քեզ հաւատացեալ ժողովուրդդ քաջալերեա եւ զօրացո. զի տեսեալ զքեզ յայս փոյթ՝ ամենայն ժողովուրդք Հայաստանեայց՝ որք ընդ քեւ են, փութացեալ պատրաստեսցին զալ յօգնականութիւն սուրբ տեղեացն, որք զինուք, որք ընչիւք, որք անձամբք, ՚ի Սուրբ երկրին դիմեսցեն յազատութիւն. զի զամբարտաւան... ՚ի պատերազմ իւրեանց յաղթահարեսցեն. եւ (՚ի) դոցա միաբանութիւն մարտակցութեան որ առ քեզ են՝ եւ արեւմտական զօրք յայսմ աշխարհէ Աստուծով՝ փութացեալ գան. որպէս զի ժառանգութիւնն Աստուծոյ ազատեսցի:...

Արդ մեք՝ որ յաջորդ⁶⁷ ենք Քրիստոսի, ամենայն բարեգործաց՝ մեղաց թողութիւն տալ, գիտացուք յԱստուծոյ տուեալ զայս պատճառս ամենայն քրիստոնէից մեղաց ապաշխարութեան. վասն որոյ եւ որք նուիրեն յայս մրցումն զանձանց չարչարանս, կամ զընչից ծախ, յուսամք յողորմութիւնն Աստուծոյ եւ ՚ի Սրբոց Առաքելոց Պետրոսի եւ Պաւղոսի շնորհքն, թէ ՚ի պատերազմի մեռանին եւ թէ մնան կենդանի, եւ զխոստումն իւրեանց կատարեն, զի ամենայն մեղաց որոց խոստովանեալ են՝ զթողութիւն առցեն. նոյնպէս եւ եթէ եւ ՚ի ձեր սահմանաց՝ եւ կամ յայլ զաւառաց ընչիւք օգնականութիւն առնեն Սրբոյ երկրին, թողութիւն առնեմք, որպէս Աստուած սրտից իւրեանց ետ կամք առատութեան, եւ որպէս արժան է ծախք տրիցն:

Եւ տես զայս զգուշութեամբ, Պատուական Եղբայր, որպէս Աստուած զքեզ ողորմութեամբն իւրով լուսաւորեալ է, զի անձամբ քո եւ ժողովրդեամբ՝ որք յաշխարհդ Արեւելից՝ ՚ի քէն հովուին, ՚ի Սուրբ տեղեացն ազատութիւն յօժարեսցիս գնալ: Եւ որպէս կատարի կամք քո, եւ Աստուծով այս խորհուրդս յաջողի, փութացիր գրով քո մեզ յայտնել: Եւ այս յայտնի լիցի քեզ, զի թէպէտ եւ ՚ի մերս մարմնական աչաց տեսութենէ բացակայ ես, հոգւոյ աչօք հանապազ զքեզ տեսանեմք եւ ողջագուրեմք սրտով եւ սիրով. եւ զխնդրուածս զոր կամիս՝ հեշտութեամբ կատարեմք»⁶⁸:

⁶⁷ Ոչ յաջորդ, այլ ՚ի դէպ էր փոխանորդ գրել, ո՛վ Սիրելի եւ Երանելի թարգմանիչ: Գրեցե՞ր արդեօք եւ դու, եւ ընկալա՞ր թուղթս ՚ի գահից անտի Հռովմայ, «Ուր եղին զՎէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ»:- Մեծի հաւանութեան վարկանիւմ զայս:

⁶⁸ Պակասէ թուական թղթոյս, այլ զի ՚ի խորագրին ասի յերրորդում ամի գերութեանն Երուսաղեմի բերեալ ՚ի Խաչակրացն, յայտ է թէ գրեալ է յամի 1189: Ընդ նմին գրեալ եւ բերեալ էր յերկրորդ թուղթն առ նոյն կաթողիկոս, որպէս ծանուցանէ թարգմանիչն՝ միով բանիւ, եւ յարէ զպատճենն, այսպէս.

«Եւ այս (Թուղթ) ընդ առաջնոյս բերաւ.

Կլեմէս եպիսկոպոս, ծառայ ծառայից Աստուծոյ *Գրիգորի* կաթողիկոսի Հայոց, ողջոյն եւ առաքելական օրհնութիւն: